Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԾՁԲ-22/9-Խ ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 21 հունիսի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Գ. Մելիքսեթյանը և Ս. Ալեքսանյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Համաձայն «ՋԿ-ԳՀԾՁԲ-22/9-Խ» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 կետի՝ մեկ աշխատանքային օրով կասեցվել էր նիստը և մասնակիցներին առաջարկվել՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները.

Սահմանված ժամկետում մասնակիցները ներկայացրել են պահանջվող փաստաթղթերը, սակայն.

5-րդ չափաբաժնի մասնակից ՖԱ Մարինե Վարդանյանի ներկայացրած «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի որակավորումը հավաստող փաստաթուղթը չի համապատասխանում հրավերով պահանջվող որակավորման պահանջներին, 8-րդ չափաբաժնի մասնակից ՖԱ Վահան Զուրաբյանի և 9-րդ չափաբաժնի մասնակից ՖԱ Տիգրան Խաչատուրի Վարդանյանի կողմից ներկայացված «մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող փաստաթղթերը լիարժեք չեն և չեն համապատասխանում հրավերով պահանջվող «մասնագիտական փորձառություն» չափանիշի ամբողջական պահանջին:

1-ին չափաբաժնի ՖԱ Խորեն Ծառուկյանի, 4-րդ չափաբաժնի ՖԱ Բենյամին Զաքարյանի, 6-րդ չափաբաժնի ՖԱ Լուսինե Աբրահամյանի և 7-րդ չափաբաժնի ՖԱ Մարինա Բաբայանի հայտերը գնահատվել են բավարար, ստացել են առավելագույն միավորներ:

Հանձնաժողովի որոշումը

Հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-22/9-Խ ծածկագրով ընթացակարգի՝ ընտրված մասնակիցներ համարել 1-ին չափաբաժնի մասնակից ՖԱ Խորեն Ծառուկյանին, 4-րդ չափաբաժնի մասնակից ՖԱ Բենյամին Զաքարյանին, 6-րդ չափաբաժնի մասնակից ՖԱ Լուսինե Աբրահամյանին և 7-րդ չափաբաժնի մասնակից ՖԱ Մարինա Բաբայանին:
2. 1-ին չափաբաժնի մասնակից ՖԱ Խորեն Ծառուկյանին, 4-րդ չափաբաժնի մասնակից ՖԱ Բենյամին Զաքարյանին, 6-րդ չափաբաժնի մասնակից ՖԱ Լուսինե Աբրահամյանին և 7-րդ չափաբաժնի մասնակից ՖԱ Մարինա Բաբայանին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի

38-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի համաձայն հրավիրել բանակցությունների, որը տեղի կունենա 24.06.2022թ. ժամը 11:00-ին, Ջրային կոմիտեի վարչական շենքում՝ Վարդանանց 13ա (նիստերի դահլիճ):

3. 5-րդ չափաբաժնի մասնակից ՖԱ Մարինե Վարդանյանի, 8-րդ չափաբաժնի մասնակից ՖԱ Վահան Զուրաբյանի և 9-րդ չափաբաժնի մասնակից ՖԱ Տիգրան Խաչատուրի Վարդանյանի կողմից ներկայացված հայտերը մերժել Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):
4. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին) վրա ՋԿ-ԳՀԾՁԲ-22/9-Խ ծածկագրով ընթացակարգի 5-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:
5. Հրապարակել հայտարարություն ՋԿ-ԳՀԾՁԲ-22/9-Խ ծածկագրով ընթացակարգի 5-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Նախագահ		Ս. Ասրյան
անդամներ		Գ. Մելիքսեթյան
		Ս. Ալեքսանյան
Քարտուղար		Ա. Սարգսյան